

1975 ՏԱՐԻՈՑ



Սիրելի Ծխականներ,

Ողջունելով ամէնքը սիրով, ի սրտէ յաջողութիւն կը մաղթեմ Ս. Եկեղեցւոյն Տարեկան Ծխական ժողովին. մաղթելով նաեւ որ յառաջիկա 1975-ը եւս արդիւնաւոր հաջող մը ըլլայ մեր Ծուխին մասնաւորաբար, եւ Համայնքիս Համար ընդհանրապէն:

Հովանիկին ներքեւ Ս. էջմիածնի Մայր Աթոռին, եւ Անոր արժանանշտիր Գահակա - ին, եւ խնամատարութեամբ Յուաշնորդարանին ու բարեցան մեր Թեմի Առաջնորդ Սը.

Հօր ու բոլորի մասնակցութեամբ մեր փոքրիկ ու գողտրիկ եկեղեցին կամարներուն տակ կատարուեցան մեր Հայց. Ս. Եկեղեցւոյ արարողութիւնները անխափան կիրակնօրեայ Ս. Պատարագի մատուցմամբ եւ տօնական օրերու Հանդիսութիւններով:

Դպրաց Դասը բերաւ իր անձնուէր ծառայութիւնը անդամներէն եւ ոչ մէկը, Դպրապետը, Պրն. Տ. Ժամկոչեան, Օրկընիստները Պրն. Պ. Չուլիկեան Տիկ. էնն Պուշչը առանց վարձատրութեան ծառայեցին եկեղեցին: Նոյնպէս Ս. Սեղանին սպասարկողներ Տ. Աշոտ Սրկա. Գրիգորեան, Ուրարակի Ռաւիթ Անտոնեան, որոնց թիւին Վրայաւել ցաւ Պրն. Սրտաւազդ Տապակեան իբրեւ Խորանի սպասարկող:

1974 տարւոյ ընթացքին մեր եկեղեցւոյ մէջ կատարուեցան 13 մկրութիւններ, 3 պատշաճ ներ եւ 7 թաղումներ: Ասցնող Յունիսին տօնեցինք եկեղեցւոյս 10-ամեակը պատշաճ հանդիսութեամբ Թեմական Առաջնորդ Հօր նախագահութեամբ. կը մաղթենք այլ բազմաթիւ տարեդարձներ:

Բոլոր այն գործերը, որոնք կը յիշուին Խնորհուրդի տեղեկագրին մէջ յաջողութեամբ կատարուեցան ժողովի անդամներու մեծամասնութեան մասնակցութեամբ. շնորհիւ Դիւանի ժրաշան գործունէութեամբ ու մասնաւանդ Ստենապետ Տօքթ. Ս. Էսէֆեանի պիտակից եւ կարող առաջնորդութեամբ. բոլորին ծառայութիւնը գնահատութեան արժուածական աշխատութեան արժանի են:

Եկեղեցւոյս հինգ կազմակերպութեանց բոլոր ժողովներուն, թիւով 55, նախագահ եւ ուղղութիւն տուած ենք: Առաջինը Ըլլալով նորագույն համայնքներուն նորէն կազմակալ ութիւն իրենց, մաղթենք:

Երկրորդը, Տիկնանը Եկեղեցասիրակ Միունիթիւնը, որ կը հանդիսանայ ողնասիւնը մեր Ծուխին, գործունէութեան շատ յաջող տարի մը բոլորեցին ատենապետութեամբ բը Տիկ. Ճինի Սայեանի եւ Մարճի Սաթեանի: Տիկնանցը միշտ կազմ ու պատրաստ ծառայելու իրենց զանազան ձեռնարկներով պայծառացուցին եկեղեցին: Ասոնք այս տարի լաւ գումար մը փոխանցեցին Ծխ. Խորհուրդին. շնորհակալ ութիւն իրենց, մաղթենք:

Երրորդ ԿիրակնօրնաՅ կողութեամբ, շնորհիւ մեր 10 ուսուցիչներու նուիրուած աշխատանքին, Տեսչութեամբը Պրն. Ճօկէթ Վարդապետեանի, եւ Տօքթ. Չարլզ Գրմարմեանի առաջնորդութեամբ տիպար Կիրակնօրեայ Դպրոցական տարի մը բուրուց: Սյս կրօնական հաստատութիւնը մեր եւ Ծխ. Խորհուրդի ուշադրութեան եւ գուրգուրանքին մասնաւոր առարկան է:

Զորորդ Հ. Ե. Ե. Կ. Պ. այսինքն ՀԱՅ Եկեղեցինը Երիտասարդաց Կազմակերպութ թոհին ուրախ ենք տեղեկացնելու որ էյ-Սի-Ուայ-0-ն վերակազմուեցաւ: Խրենց տեղեկագիրը ցոյց կուտայ զգալի յառաջդիմութիւն. նոր ծրագիրներ, կայտառ գործունէութիւննեւ մեծ հետաքրքրութիւն թէ: կուրախացնեն եւ թէ մեծ յոյսեր կը ներշնչեն մեզի: Ծխական Խորհուրդը բացառիկ եւ կարեւոր գումար մը յատկացուց իրենց, եւ միշտ սկատրաստ է օդտակար հանդիսանալ էյ-Սի-Ուայ-0-ի եւ Կիրակնօրեայ Դպրոցին: Երիտասարդաց Անտեսպետներն են, Օրդ. Մալուինէ Պրառւն (Քէտիճեան) եւ Պրն. Ալըն Գագաննեան:

Մեր Թեմական Պատգամաւորները, Տիարք Ճօրճ Ճըսգալեան, եւ Աբրահամ Պատուեան, ամէն անդամ որ պէտք եղաւ միշտ աշակեցնեան Խխ. Խորհուրդին եւ Օգտակար եղան:

Եկեղեցւոյս անդամներու թիւին աճումը միայն կը բաշխաւորել որ մեր Ծուխը իրաւունք ունենայ երկու Թեմական Պատգամաւորներ ունենալու: Առաջարկ ներկայացնեցած ենք Պատժ. Ծխ. Խորհուրդին որ անդամագրող Յանձնախումբ մը կազմուի. նաեւ այցելութիւններ տուող Յանձնախումբ մը, որոնց նման բազմա - թիւ Հայ եկեղեցիներ ունին Սիացեալ նահանգաց մէջ:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԻ ՀԱԲՈՒԹՅԱՆ

ՑԱՀԱՐԵՎՈՐՈՒՄ ՑԱՀԱՐԵՎՈՐՈՒՄ

ՇՆՈՐՀԱԼԻ ԾԽԱԿԱՆ ԱՄՍԱՑԵՐՅԸ, կանոնական օրաբարը հրատարակուեցաւ տեղեակալ պահեած և միայն եկեղեցւոյ անդամները, այլ նաեւ, մայրաքաղաքին, Հայ Համայնքը՝ մեր Ծուխի. կեանքին եւ գործունէութեան մասին:

Թե՛Ռին խմբագրութիւնը ձեռնահասօրէն վարեց Տօքթ. Սրբուհի էսէֆեան: Ընթեր- ցողներու կողմէ շնորհակալութիւններ յայտնուած են գրաւոր եւ բերանացին, նոյնը եւ կընենք մենք: Ամէնուս փափաքն է որ ան շարունակէ իր այս պաշտօնը եւս:

ՇՆՈՐՀԱԼԻ ամէն ամէն 16 էջերով կը հրատարակուի (բացի Ցուլիս-Օգստ.է)

Եկեղեցւոյ դրասենեակը հրատարակած է նաեւ թիւվ 6 երկեզրուեան արարողու- թեանց տետրակները, որպէսզի բացառիկ արարողութեանց մասնակցին կամ հետեւին հա- ւատաց եալները: Շնորհակալին եւ երկուտասնեակը մը յայտարարութիւններ աւելի քան 450 օրինակ կը դոկուի եկեղեցւոյս հասցեանկ երուն:

Ամբան շրջանին ունեցանք այցելու Հոգիւոր Հովիւներ, որոնք Պատարագ ե - ցինուեւ քարոզեցին, անոնք են Գեղու. Տ. Գարեգին Եպիսկոպոսիկ. Գագաննեան, Կաթողիկոսի Պատուի- րակ Աւտորալիոյ Թեմին, եւ նախկին Հովիւր եկեղեցւոյս Հոգշ. Տ. Գէորգ Մ. Կարղա- պետ Կարպիսնեան:

Հովուական այցելութիւններ տուած ենք բոլոր Տիւանդներուն անխտիր, ան - դամ կամ ոչ անդամներուն նաեւ սգաւորներու եւ այլ պարագաներու բերմամբ երբ որ պէտք եղած է այցելել:

Թեմական Պատուի իրակի պաշտօնի բերմամբ ներկայացնցած ենք մեր եկեղեցին պաշտօնական առիթներով: Հովուուր պէտք եղած է կամ հրաւի րուած ենք: Ուրախնքը յայտնելու որ, յաջողած ենք հրաւի բաղադրութեան աշխատանքներուն գլուխը ընթացական տակ մեր եկեղեցին Հովովմէական Կաթոլիկէ, Եպիսկոպոսական, Մելուտական, Սկըրչական եկեղեցիներուն եւ մի քանի նեսպանատուներու:

Միջ-եկեղեցական քսան ձեռնարկներու հրաւի րուած ենք. յիշելու համար մի քանի նույն պահանջական առիթներու տարեղարձին, ճան Եպիսկոպոսիկ. Ալ ըսի գահակալութեան, Ուաշինգտոնի գոթիտրընի մէջ, նորած երկու Հովովմէական ուղղուներու ձեռնարկութեան. էկումենիկ շարք մը ժողովներու, իբրեւ ղիտող Կաթոլիկ եկեղեցւոյ Մյերիկայի Եպիսկոպոսաց համագումարին. Մանրամասն տեղեկագիրը Թեմական Պատուի րակի Զանձնախումբին կողմէ Արաշնորդարան դրկուած է: Այս առիթիւ գնահատութեան իսօսք ունինք եւ շնորհակալութիւն կը յայտնենք Յանձնախումբի անդամներուն Ա. Պէտ Տիար Ճ. Ճըսգալ եանի, Ա. Պահիր Տօքթ. Մ. էսէֆեանի, եւ զանձապահ Տիար Աբրահամ:

Պատութեանի:

Ուրախնքութեան եւ երախտագիտական զգացումով շնորհակալութիւն ձեր բոլուն Միջ-Եկեղեցի Անդամներ, որ մեր Հոգեւոր ու Ծական ծառայութեանց, մասնակից եղաք Անխտիր բոլուն ձեր կարողութեան, ժամանակին, եւ նիւթականին, ներած շափով մաս- մասնակցութիւննի բերիք մեր Ծուխի գործերուն դուք սիրելիներ այդ ըսիթեան դավառ, գործոն, եւ նուիրուած ուզգոհութեան ոգինով մեր նպատակը Թող. Ըլայ միշտ յարաջ նայիլ մեր Ս. Եկեղեցիին ու Սպգին Օգուտը միշտ վեր բռնելով, եւ Ճէրը պիտի Օրէնչ մեր գործը որքան ատեն որ այսպէս համերաշխ ենք ու իրարու հան - դէպ սիրալիր ու յարգալիր զգացումներով եղբայրաբար գործակցող:

Ամենայն կամաց պահանջ ողջունիւ եւ ալապոյն մաղթանքներով:

Յամի Տեղան 1975 թ-26-ն Յունուարի

Պատշինկը Տ-Տ. Գ.

